# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2018 թվականի N 56-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 100-րդ, 101-րդ հոդվածների պահանջները և հիմք ընդունելով Գագիկ Մկրտչյանի, Քնարիկ Ենոքյանի, Կարեն Գևորգյանի և Արփինե Մկրտչյանի 2018 թվականի մայիսի 18-ի նրանց սեփականության իրավունքով պատկանող հողամասից / վկ.1469948/ հրաժարվելու մասին դիմումը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ  Ե Մ՝**

1. Քաղաքացիներ՝ Գագիկ Մկրտչյանին, Քնարիկ Ենոքյանին, Կարեն Գևորգյանին և Արփինե Մկրտչյանին Լեռնանիստ համայնքի վարչական տարածքում գտնվող, ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող 1,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության /կադաստրային ծածկագիր 07-033-0249-0016, սեփականության վկայական N 1469948/ վարելահողը ճանաչել համայնքային սեփականություն՝ համաձայն դիմումի:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մայիսի 22
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 57-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՍԱՐԴԱՐԱՊԱՏԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 100 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24 -րդ կետով, 38 -րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 46-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 50-Ն որոշումը

***ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝***

1. 2018 թվականի մայիսի 28-ին կազմակերպված Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման և Սարդարապատի հերոսամարտի 100 ամյակին նվիրված միջոցառման կապակցությամբ, Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեից դուրս գրել ընդամենը 317,500 /երեք հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր/ դրամ՝

08.2.4.51 /այլ մշակութայանին կազմակերպություն/ ծրագրի 4216 /գույքի վարձակալում/ հոդվածից՝ 55 500 /հիսունհինգ հազար հինգ հարյուր/ դրամ, 4239 /ընդհանուր բնույթի ծառայություններ/ հոդվածից՝ 212 000 /երկու հարյուր տասներկու հազար/ դրամ:

01.6.1.51 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ծրագրի 4261 /գրասենյակային ապրանքներ/ հոդվածից դուրս գրել 50.000 /հիսուն հազար/ դրամ, ծաղկեպսակ և ծաղիկներ ձեռք բերելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018 թ. մայիսի 22
գ.Լեռնանիստ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094 55 33 04, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 58- Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐ՝ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ՍԵՐՅՈԺԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ /ՀԱՆԳՈՒՑՅԱԼ/ ՍԵՆՈՒՇԿԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԻՆԳԱ ԳԵՂԱՄ ՍՏՅՈՊԱ ԶՈՀՐԱԲՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԲԱՎԱԿԱՆ ԱՎԱԳՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 կետով , հիմք ընդունելով Վասպուրական Զոհրաբյանի 2018 թվականի մայիսի 29-ի դիմումը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի բնակիչներ՝ /հանգուցյալ/ Սերյոժա Զոհրաբյանին, /հանգուցյալ/ Սենուշկա Զոհրաբյանին, Վասպուրական , Ինգա, Գեղամ, Ստյոպա Զոհրաբյաններին և Բավական Ավագյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող ( կադաստրային ծածկագիր 07-033-0036-0055, սեփ. վկայական 1527745 ) Լեռնանիստ համայնքում գտնվող 0.195հա մակերեսով հողամասին տրամադրել հասցե՝
Կոտայքի մարզ Լեռնանիստ համայնք 3- րդ փողոց թիվ 11 :

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

2018թ մայիսի 29 գ.Լեռնանիստ